Ա. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 21 ՆՈՅԵՄԲԵՐ 1898 — ԹԻՒ 81

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսի մէջ հասցեներ
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »
Արտասահմանի հասցեներ
Տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »

ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

—)(—

Գրութիւնք չեն տրուիր

—)(—

Մանուշնան տոպր 20 սանթիմ է. Լրիվ հատ մի սանդամներու համար 20 0/0 զեղչ կը տայ։

# ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՊՈՏԱՍԽԱՆԱՏՈՒ Յ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

Նամակ եւ դրամ ղրկել հետ, ս. զրուցեանս հասցեին

—

Редакция на вѣстникъ «Шаржумъ» Варна.

Redaction du journal «Charjoum» Varna (Bulgarie)

—

)( ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ )(

)( ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ )(

## ՍՏԻՊՈՂԱԲԱՐ

կը խնդրենք մեր բոլոր այն բաժանորդներէն որոնք տակաւին Բ. վեցամսեան չեն վճարած,

ինչպէս նաեւ անոնցմէ՝ որոնք սկիզբէն ի վեր «Շարժումը» կանոնաւորապէս ստանալով հանդերձ, մինչեւ այսօր սանդիմ մը իսկ չեն ղրկած խմբագրութեանս, որ՝ այդ վճարումները «անմիջապէս» ընելու ժամանակը հասած համարեն, խորհելով թէ թերթ մը հրապարակ հանելը ձայն կարդալու չափ դիւրին գործ չէ, այլ նիւթական, մտաւորական և ֆիզիքական ահագին զոհողութիւններու կը կարօտի։

## ՄԵՆՔ Ի՞ՆՉ ԱՆԵՆՔ

—)·(—

Երեկվայ ստրուկ Կրէտէն այսօր ազատ է։ Երեկ սգաւոր, այսօր երջանիկ կղզու բնակիչները մեծ հրճվանքի մէջ են։ Հրճվում են և այն կրէտացիները, որոնք թուլացել էին, չէին հաւատում իրանց բախտի աջողութեանը և խոչնդոտ էին հանդիսանում իրանց յամառ ապըստամբ եղբայրներին։ Ուրախ են, զոնէ երեսանց, և մեծ պետութիւնները իրանց պսակաւոր և անպսակ ներկայացուցիչներով, որոնք դեռ մէկ տարի առաջ, իրանց գծուծ շահերի համար, թոյլ տուին չախչախվի փոքրիկ ցունատանը Կրէտէի ազատութեան համար մղած անհաւասար կռիւ մէջ՝ ինչ որ Սուլթանի իրաւունքներ չը խախտելը և նրա արիւնլայ երկրի ամբողջութիւնը պատրակ բերելով։ Բայց պատմական ճակատագիրը այլ կերպ էր որոշել. ապստամբ կրէտացիների յարատեւ յամառութիւնը տակն ու վրա արեց Սուլթանի զօրեղ պաշտպան կայսրների որոշումը. հրացանն ու սուրը յաղթեցին անսիրտ դիպլոմատների ժանգոտած գրիչներին։ Եւ, Կրէտէն եղաւ ամենավերջին ու կենդանի օրինակը այն ճշմարտութեան՝ թէ Թուրքի, ինչպէս և ամեն մի բռնակալի, ձեռքից ազատվելու միակ միջոցն է կրակ և սուր, յարատեւ ու շարունակ՝ մինչեւ որ մի աննշան դէպք, մի սխալ քայլ փադիշահի կողմից՝ պատճառ կը դառնայ տանջվող ժողովրդին արժանաւոր կերպով վարձատրվել իր տարիներով քաշած տանջանքի և թափած արեան փոխարէն...

Կրէտէն ազատվեց, մենք ի՞նչ անենք. օրինակ առնենք կրէտացիներից, համոզվենք որ զինադադար և հաշտութիւն առաջարկող, յեղափոխութիւնը ճնշողակար համարող, պարզ թէ մշուշապատ դարձվածներով, ամէն մի հայ, ստախօս, մտավախ, իմաստակ, թուլամորթ և աղգադաւ է։

Արհամարհենք այդ պիսիներին, շարունակենք մեր գործը. որովհետեւ յեղափոխութիւնը ամէն մի ժողովրդի համար գրեթէ մի տեսակ է, չնչին տարբերութիւններ կան։ Բաւական է միայն հասկանալ և ըմբռնել յարմար վայրկեանները, համոզված լինել որ ժողովուրդը զզված է իր անարդ վիճակից և աւելի լաւը ունենալու ձգտումը ունի։ Մենք հաւատում ենք որ հայ ժողովուրդը այս պայմանները ունի. արդեօք կասկածե՞նք որ կրէտացիների ապստամբական յամառութիւնից զուրկ է։ Բայց այդ դէպքում մենք կորած ենք. Սուլթանը կրէտացիների վրէժն էլ մեզնից է հանելու։ Մեզ խեղդելու և կոտորելու են։ Մի՞թէ կրկին կոտորվենք ոչխարի նման։ Արդարացնե՞նք այն կարծիքը՝ թէ հայերս ոչխար ենք, խեղճ, ողորմելի և կոտորվելու արժանի մի անմիտ փարախ. հրաժարվե՞նք մեր ազատական իղձերից։ Ոչ և հազար անգամ ոչ։

Լարենք մեր բոլոր ուժերը. պատրաստվենք։ Հրէշի մի ոտքն էլ կարեցին. նա անդամալոյծ է արդէն։ Մեզ փառաւոր վայրկեան է սպասում. մարդկային պատմութեան մէջ մենք պէտք է կատարենք տաճկական բռնապետութեան վերջին հարուած հաստընողի դերը...

Հասցնենք այդ հարուածը... վաղ թէ ուշ, բայց հասցնենք...

ՎԱՐԴՈ

——)·(——

## ԱՐՁԱԳԱՆԳ

—)·(—

Թուրք լրագրութիւնը — եթէ կարելի է այս անունը տալ այդ շղթայակապ ստրուկին — որ մինչեւ վերջին օրերս Կրէտէի խօսքը բնաւ բերանը չէր առներ, հիմա սկսած է անով զբաղիլ։ Ասկէց առաջ՝ Սելանիկ, Իզմիր և ուրիշ տեղեր ցամաք ելլող հայարաւոր դաղթականներու, ոստիկաններու և զինուորներու խօսքը կընէր, որոնք, կըսէր, Միջերկրականէ՞ն կուգան։ Հիմակ ալ ֆրանսական, Իտալական զինուորներու Կրէտէէն հեռանալը կաւեստ, իբր թէ հասկցնել ուզելով թուրք ամբոխին թէ՝ Կրէտէի խնդիրը՝ շնորհիւ Սուլթանի վերջացած է ու խաղաղութիւնը վերահաստատուած։ Մի թրքական խեղճ ժողովուրդ, հսկա՛յ երախայ, որ անկդած գոմէշի մը պէս սպանդանոց կը տարուիս, և գոնէ վիճակիդ գիտակցութիւն ունենալու մեծութիւնն ալ չունիս։ Թուրքիոյ մէջ մամուլը իր թղթէ կապերով աերութեան վէրքերը, ժողովուրդներու խոցերը փաթաթելու պաշտօն ունի։ Ամենէն տագնապալից վայրկեաններու մէջ հոն է, ճերմակին սեւ՝ և սեւին ճերմակ ըսելու. և մորֆինի ներարկումներով խաբուսիկ ընդարմացում մը տալու մահացու ախտերու. հ. կոչումի ճիւաղ յեղաշրջումով մը խաւար տարածելու հոն՝ ուր իր ճառագայթներուն պէտքը կար...

* * *

Մամլոյ այդ կաշկանդումը պատճառ մը չէ ոակայն որ մեր պատրիարքը դրականութեամբ զբաղելու ատեն գտնայ։ Մօտերս հրապարակ պիտի հանէ հատոր մը, ուր վերջին կէս դարու մէջ ապրող բոլոր եպիսկոպոսներուն կենսագրութիւնը պիտի երեւայ, լուսանկար պատկերներով զարդարուած։ Եթէ երկը խղճմտօրէն գրուած է, մեր եպիսկոպոսներուն գէթ մեծամասնութիւնը պարծանքի էջերու չպիտի կրնան հանդիսիլ այդ գրքին մէջ։

Կենսագրութեան ի՛նչ նիւթ պիտի մատակարարեն այդ վեհաշուք պարապութեամբ զեղուն կեանքերը, Պոլսոյ սալայատակներուն վրայ այդ թափառած ու աննպատակ մոլորումները, պաշտօնէ դասալքութիւնները, փառասիրութեան խունաւոր շոքիներով լեցուն գանկերը... եւ, ա՜վ հրէշութիւն, այնտեղ պիտի երեւան նարՊէյներու հոյակապ և պաշտելի զէմքին քով՝ Աշքեանի մը ճիւաղային երեսը. և Իզմիրլեանի քով՝ Բարթուղիմէոս մը, ինչպէս պատմութիւնը Վասակը Վարդանին քով կը բերէ. բայց սա էական տարբերութիւնով՝ որ պատմութիւնը անաչառ է և ամենուն կը բաշխէ ինչ որ սեպմանած էր, իսկ Օրմանեան չը պիտի կրնայ ընել այդ բանը. և թոմոսանք մը պիտի դնէ հոն՝ ուր յաւիտենական աղօթքը կը վայլէր, և պըսակ մը այն գլխին վրայ, որ թիարանի շղթաներուն արժանի է։

* * *

Եթէ իրաւամբ կը գանգատինք թուրք կառավարութենէն որ իր անմիտ կաշկանդումներով նոր-կալի դրութեան մը հասցուցած է մամուլը, միւս կողմէ, երբեմն ալ կարծես կը ցաւինք այն սանձարձակ ազատութեան վրայ զոր կը վայելէ արտասահմանը, որովհետեւ անիկայ շատ անգամ վնասանգաւոր գործիք մը կը դառնայ, կա՛մ խաբեբաներու ափին մէջ, և կամ՝ նորաբոյս երիտասարդներու գրչակին տակ։ Այս վերջին տպաւորութիւնն է որ կը թողու մեր վրայ Մանչէսդրի այնքան փոքր այլ արդէն այնքան ճզղած երախայ-թերթը։ Խեղճ Զօպանեան, իր բովանդակ կեանքին մէջ այսպիսի անձրեւի մը չէր բռնուած։ «Երեկուանն» է ալ «Թուղթի փառքին» հեղինակը. հին մըն է, իմաստակ մը, և մանաւանդ Իմաստակութեան Վեհապետ մը։ Ինչ չափով չափես, նոյն չափով կը չափուիս. Աւետարանի այս յաւիտենական սկզբունքն է որ պերճութեամբ կը ցայտէ։ Զի, չէ մոռցուած այն անողոք պայքարը զոր Զօպանեան

մղեց «հիներուն» դէմ. նոյնքան չափազանցուած պայքար՝ որքան այսօր այն հայհոյանքները ուրոնք Անգլիոյ մշուշներէն կը թափին «Ոսկեծղին, բարեաց բաշխիչ» «Անահիտ»ի վրայ։

Ցաւալի է այս. մամուլը անձնական քէֆի գործիք դարձնելու չէ. նոյն իսկ հակառակորդի մը արժանիքը ճանչնալը պարկեշտ մամուլի ամենէն մեծ պարտքն է. և ճիշդ այս է որ շաբերուն քով կը պակսի. անգամ մը որ ատելութեան սլաքը իրենց մէջ թափանցէ, մոլեգին յիմար և ճշմարիտ կոյր կը դառնան, ու՞լ բան մը չեն տեսնար, ոչ իսկ փոքրագոյն արժանիքը, այլ միայն՝ ինչ որ կընդնշմարէ պարապ ուղեղ մը, «պարապ, պարապով չրջապատուած»։

ԳԱՄԵՐ–ԱՐՇԱՒԻՐ

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

*Թաւրիզ, 25 Հոկտ.*

*Կրօնափոխութիւնը քողոքականներուն մէջ. — Վանուոյ նոր դիպքեր*

—

Նախորդ յօդուածներիս մէջ յիշել էի Ուրմիոյ ասորիներուն մէջ ռուս կղերի գործունէութիւնը եւ օրթոդոքսութեան հակայաքայլ առաջդիմութիւնը։ Ռուս կղերը չէ բաւականանում միայն գործել նեստորական հին եկեղեցու պատկանող ասորիներուն մէջ, այլ խիզախում եւ համարձակվում է մուտ գործել կաթոլիկ բողոքական ասորիներուն մէջ՝ նրանց էլ որսալու միտումով։

Արդէն բաւական թուով կաթոլիկ ասորիներ մտել են օրթոդոքսութեան փարախը, այժմ լսում ենք, որ Ուրմիայում 150ի մօտ բողոքական ասորիներ եւս ընդունել են ռուսադաւանութիւնը։։։

Անշուշտ բողոքական միսիոնարութիւնը հաշտ աչքով չէ նայում այս մեծ կորուստին։ Թաւրիզ գտնվող միսիոնարները իսկոյն գնում են Ուրմիա, չը նայած, որ այնտեղ արդէն գոյութիւն ունի մի մեծ միսիոնարութիւն բաղմաթիւ դպրոցներով։ Հայ գաղթականների օգտին Եւրոպայից եւ Ամերիկայից եկած գումարներից նպաստներ են բաշխում ասորիներին, որպէս զի մոլորեալ ոչխարներին նորից իրանց փարախը մտցնեն, թոյլերին քաջալերեն եւ այս կերպով արգիլեն կրօնափոխութեան հոսանքը...։

Հերթը գալիս է լուսաւորչականներին, եւ, որոնք էլ ինչպէս արդէն յիշել էինք, մտադրութիւն ունեն վայելել ռուս կղերի հովանաւորութիւնը։ Առաջնորդ Սրբազանը դիմել է ազգու եւ օրինաւոր միջոցների, որպէս զի նրանց նիւթական եւ բարոյական միջոցներ հայթայթելով՝ այդ վնասակար եւ ազգակործան չարժման առաջքը առնվի։ Լա՛ւ, սակայն ե՞րբ։։։ խօսքո՞վ թէ գործո՞վ...։

* *

Հեռագիրները ժամանակին արդէն ծանուցել են թէ Վանում հայերի եւ թրքերի մէջ նոր ընդհարումներ են պատահել։ Իրողութիւնը հետեւեալն է.

Անցեալ տարի, Խանաւորի արշաւանքից յետոյ, «Հնչակեան» մի փոքր խումբ «Ֆարամազ» անուն ռուսահայ խմբապետի առաջնորդութեամբ Վան էր մտել։ Մի քանի ամիս յետոյ Ֆարամազ եւ իրա խմբերից մի քանիսը մատնուեցին տեղական կառավարութեան ու բանտարկվեցին. նրանց հետ նաեւ տեղացի մի քանի հարուստ հայեր։

Մի քանի ամիս տեւող դատավարութիւնից յետոյ՝ Ֆարամազին յանձնեցին Վանայ ռուսական կօնսուլին որը իրը ռուսահպատակ, բանտարկեց զայն ռուսաց կօնսուլատում։

Այս վերջերս Վանայ Դաշնակցականները Ֆարամազին փախցնում են ռուսաց կօնսուլատից եւ ազատում...։

Այս դէպքից յետոյ՝ Թուրք կառավարութիւնը սկսում է իր սովորական խիստ խուզարկութիւնները եւ խժդժութիւնները։

Բացի այս դէպքից, Վանայ շրջակայքում տեղի են ունենում լուրջ ընդհարումներ մի Դաշնակցական զինեալ խմբի եւ քիւրտ համիդիյականների միջեւ։ Մի երկրորդ Դաշնակցական խումբ, որ մտադիր է եղել Վան մտնել, ճանապարհների խիստ հսկողութեան պատճառով ընդհարումներ է ունեցել, եւ չը կարողանալով շարունակել ճանապարհը վերադարձել է իրա նախկին տեղը։

ՄԻՐԶԱ

*Իզմիր, 15 Նոյեմ.*

Իզմիրէն հառած մասնաւոր նամակի մը մէջ կը կարդանք.

Յայտնի է թէ Իզմիր Տաճկաստանի այն միակ քաղաքն է ուր եւրոպացիներու ներկայութեան շնորհիւ ժողովուրդը աւելի հանգիստ կապրի։ Դժբախտաբար, շատ հաւանական է որ մեր վիճակն ալ վատթարանայ՝ Կրէտէէն դունդ ազունդ դիմող թուրք գաղթականներու պատճառով։ Հետեւեալ դէպքէն կրնաք որոշ գաղափար կազմել։ Երկու օր առաջ քանի մը կրէտացի կատաղի թուրքեր ուղելով իրենց չարաշար պարտութեան վրէժը լուծել՝ յոյներու վրայ յարձակեցան, և անոնցմէ տասը հոգի չափ անգթօրէն վիրաւորեցին դաշոյնի հարուածներով։ Կառավարութիւնը թէեւ ոճրագործները ձերբակալելու փութաց, բայց յուսումը չէ դադրած քաղաքիս մէջ, մանաւանդ որ թուրքերը հանգիստ մնալու բնաւ արամադրութիւն ցոյց չեն տար։ Խնդիրը այնքան լուրջ և մտահոգիչ երեւոյթ մը ստացած է, որ դեսպանական միջամտութիւն հրաւիրած է։ Անգլիական հիւպատոսը հեռագրով անմիջապէս խնդրեց որպէս զի զրահաւորներ ղրկուին քրիստոնեաները պաշտպանելու։

* * *

## ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

—)·(—

Այս գիւղի շուրջ ու բոլոր կան շատ մը ուխտատեղիներ ու մէյ մէկ սուրբի նուիրուած վայրեր, ու այդ ամէն նուիրական յիշատակների հետ, իրենց Նարեկացիի վանքն՝ կանգուն ու կիսակործան տաճարները, կաթնաղբիւրի աւազ աղբիրի կենսատու վտակներն ա՛յնքան սերտ ու սեղմ կապած է զիրենք իրենց հայրենական հողին հետ, որ, տարիներէ ի վեր՝ թէ Սլոզգի ըսուած քոչարներէն (աշիրաթէն) ու թէ Պիթլիսի ֆանաթիք ու Լեզեքիչ միւֆթիներէն (*) ու թուրք զազիր կառավարութենէն կրած ամէն տուայտանաց ու խոշտանգանքներին դիմանալով տակաւին հայրենիքի ապագայ յոյսերով կը շարունակեն ուրիշ շատ մը գիւղացի ու քաղաքացի հայոց պէս կուրծք տալ անխիղճ թշնամիի ամէն սլաքների ու հաւատքի անընկճելի ուժով միշտ բարձր բռնել գոյութեան արիւնոտ դրօշակը։

Այն պարտէզ՝ որ գիւղի դիմացի գեղեցիկ մարմանդին կը նայէր ու պտղատու ծառերով ու Հայաստանի անուշահոտ ծաղիկներով շքաւորուած էր, գիւղապետ Շահէնի սիրական սեպհականութիւնն ըլլալով, հոն առաջնորդեցին մեզ, ուր արդէն պատրաստ մեզ կսպասէր ամէն բան։ Շուտով կուգան կը խառնուին գիւղի անշուք ծաղկոցի կայտառ տղայքներն, ու ամէնքը մէկ բերան ու մէկ սիրտ, կերգեն սրտաթունդ.

Հերիք որդեակք այսքան տարուան տառապանք,
Հերիք դաժան Թուրքին, քիրտին ոտքն ինկանք.
Քանի խոնարհ գլուխ դրինք գայլերին,
Այնքան ծանր բեռներ դրին մեր վզին,
Հերիք, ելնենք ցոյց տանք թէ մենք հարազատ,
Հին քաջերի արիւնից ենք եւ ազատ,
Թէեւ չունինք, ո՛չ սուր, ո՛չ թուր, ո՛չ նիզակ,
Մեր բահերն էլ կանեն նրանց չան սատակ. եւ այլն։

(*) Երդական վայրագութեանց օրերէն մնացած այս գիւղը՝ որպէս թէ, Պիթլիսի մուֆթի չեխին կը հաշուեն, ու այդ պատճառով ալ այսօր այդ ամբարիշտ կրօնաւորի տան ժառանգորդները՝ այս գիւղի մէջ բաւական հողեր բռնի գրաւելէ զատ, կը նկրտին ամբողջ գիւղը ձեռքերնին անցունել, սակայն հայերն ամենայն յամառութեամբ կը դիմադրաւեն այդ բոլոր ոտնձգութիւններուն...

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՓՈՔՐԻԿ ՆԱՀԱՏԱԿԸ

1896 *Օգոստոս* 14ի յիշատակ մը

—

ԻՐ ՄՕՐԸ Ն.ՈՒԻՐՈՒԱԾ

Ա.

Քսանըչորս ժամ էր որ տանը մէջ ամփոփուած կը մնային։

Վարը, փողոցին վրայ ու տանը բոլորտիքը, զինուորներ գունդ գունդ, միշտ ան ու դողի մէջ, թէ գուցէ անհրեւութաբար կը նետուէր ոումբը, որ բաւական աւերումներ ըրած էր հայ յեղափոխականի ձեռքով։ Ու կիներ, աղջիկներ, պատերուն նեւ սըլըքատած, միշտ վերահաս վտանգի մը նախազգածութեամբ, սրտատրոփ լըսեցին ահագին որոտումները իրենց տանը առջեւ, որ կրակներէ ու երկաթէ չրջապատուած ամրոցի մը փոխուած էր։

Թշնամին պատին տակն ու պատուհաններուն առջեւ էր. մարդկային բիրտ գազանութիւն մը իր ուժերը կամփոխէր պատսպարանին առջեւ, կէտ մը, սարսափելի կէտ մը սակայն վառօդի ու գնդակի, երկաթի եւ զօրագունդերու մէջ։ Ոչ մէկ աչք կրցաւ քուն տեսնել այդ օրհասի ժամերուն, եւ փոքրիկ տղեկ մը, ուրթը տարեկան, կիներու եւ աղջիկներու քղանցքին եռեւ ծրարուած, տեսաւ բոլոր վախերը, բոլոր սարսափները, բոլոր արհաւիրքները, եւ մանաւանդ իրենց սպառնացող գազանութիւն մը որ վարը, պատուհաններէն դուրս ակռայ կը կրճատէր, բերանը փրփրած, աչքերը մոլեգին, դէմքը զարհուրելի։

Տղեկը դիպուածով մնացած էր այդ իրենց դրացի տունը, եւ մայրը, ոումբի անակնկալ բոպէներուն, չէր կրցած թեւերուն տակ ունենալ իր սիրունիկը, իր գգուելի մանկիկը։ Ու մայր ու տղայ, քսանըչորս ժամ, պատուհանէ պատուհան իրարու նայած էին զողզողալով։ Եւ մանաւանդ հէք մայրը տեսած էր որ իր սիրունիկը կը գտնուի սարսափելի կէտի մը վրայ, դէպի ուր սրուած է մարդկային բոլոր վայրագութիւնը։

Բ.

Քսանըչորս ժամ կռիւ, գնդակ եւ ոումբ... ու ալ սպառած էր պատերազմին պաշարը, եւ ուժերն ալ լքուած էին։ Պէտք էր անձնատուր ըլլային. ամրոցը, այդ սարսափելի հիւլէն, պիտի կործանի յաղթական գունդերուն հպա՛րտ ոտքին տակ։ Կռուողները անձնասպան կըլլային. մէկը, թոյնի ազդեցութեան ներքեւ գալարուած, պրկուած, հոգին կը փչէր չարաչար տանջանքներու մէջ. ուրիշ մը արդէն ինկած վերջացած էր, երրորդ մըն ալ, թերեւս ամենէն կատաղին ու մոլեգինը, ստոյիկեան սա՛ռն անտարբերութեամբ կը տարածուէր տախտակներուն վրայ, ատրճանակին խողովակը, պաղարիւն, տեղաւորելով զանկին մօտ, եւ, վայրկեան մը եւաքը, տխուր պայթիւնէ մը յետոյ, որ վերջին ու սարսռող պայթիւնն եղաւ, մահահոտ լռութիւն մը ծանրացաւ տանը մէջ։ Երեքն ալ նորատի երիտասարդներ էին ու երեքն ալ ինկած էին միեւնոյն մահով։

Ա՛լ ոչինչ մնաց, ու տանը զուները բացուեցան։ Կիներ, աղջիկներ դուրս պիտի ելլէին. եւ մայր մը, աչքերը, սիրտը, հոգին, դիմացի տունէն, դարձուցած էր դէպի դուռը։ Խումբ մը ոստիկաններ սանդուղներէն վեր կելլեն. առաջին տեսքին՝ հրացանին կապարն է որ վժալով կը սուրայ սենեակին մէջ։ «Վա՛յ» ճիչ մը սիրտ ծակծկող, ու երախան ծալուած ծոեցաւ։

—Անոնիկ հանըմ, ինձի զրկէ, զարնուեցայ։

—Քալէ՛, տղաս, բան չկայ։

—Կուրծքս կը տաքնայ կոր, Անոնիկ հանըմ։

—Մի՛ վախնար, բան չկայ կըսեմ։

Այսպէս մի քանի տաք տաք երգերէ ետքը՝ մեր ամենուս կողմէ յուսալի ու քաջալերական խօսքեր կուղղուին թէ այդ պարզ գեղջուկներուն, և թէ իրենց զաւակաց։ Այդ պահուն կը մօտենայ մեր խումբին՝ Միւֆթիի Ռուզիզի ներկայացուցիչ—Հաճի Իպօն—որ իր գլուխ փաթթած ճերմակ կապոցով արաբական ու թրքական պժգալի տիպը կը կրէր, ու իր աջ կողմին կապած խանչէրով Մէհմէտի հաւատացեալ զաւակ լինելու ապացոյցը կուտար։ Ցուշիկ ու համեստ մօտենալով մեզ, դաւառացի հայու մը կատարեալ առոգանութեամբ հայերէն բառերով «բարեւ ձեզ աղաներ, բարով էք եկեր» ըսելով անցաւ նստեցաւ։ «Բարով եկաքի» ու «բարով տեսաքի» յաւիտենական բանաձեւէն ետք, ինքն Հաճի Իպօն (Իպրահիմ) զարձեալ հայերէն լեզուով խօսք բանալով, կը խօսինք եղանակի գեղեցկութեան, այդ գիւղի ազատութեան, վարժարանի տղոց աշխատութեան և. ինդիրներու վրայ։ Ու այդ Մէհմէտի որդիի բերանի մէջ ա՛յնքան դրաւիչ կը դառնայ մեզի հայերէն լեզուն՝ որ պահ մը կը մոռնանք ամէն իրաւանութիւններն՝ ու կերազենք ազգային ազատ տիրապետութեան մը շրջանը, որ՝ հայ լեզուն իբր տիրող լեզու՝ ամենէն ճկուն ու զօրեղ՝ երկրի օրինական լեզուն հանդիսանալով, իր բոլոր ընդունակութեամբ Արեւմտեան ազգաց մտաւորական ու գիտական ամէն գանձերը փոխանցէ ի մեզ...։ Կը յիշենք անգլիացի այն մեծ մարդն, Լորտ Պայրն, որ Յունաստանի համար ա՛յնքան հմայուելէ ու մեռնիլ մաբերելէ առաջ, ցանկութիւն ունեցաւ տարի մը Վենետիկ անցուցնել, հայերէն սովրիլ ու Մխիթար աբբայի յաջորդների հետ հայերէն լեզուով խօսիլ Հայաստանի վրայ։ Լորտ Պայրնի այդ ցանկութիւնն եթէ թերի մնացած լինի իրագործուելու իր ժամանակին, մենք այն տեղ հայրենիքի հողին վրայ կը տեսնենք հաճի Իպօի նման շատ մը ազնիւ Մուսուլմաններ որոնք տեղացի հայու մը պէս հայերէն խօսիլ գիտնալով, գաղափարի մօտիկ շփում մը շատ դիւրին կարելի էր յառաջ բերել, եթէ՝ ժամանակին ազգային քաղաքական տեսակէտով՝ իւրաքանչիւր հեռապատկերը ի նկատի առնուելով, լուրջ իրանավարութիւնով համակրաշխութեան ու հայրենակցական հաւատիքները գործնապէս երեւան բերուէին։

ՆԱՀԱ-ՊԵՏ

(Շարունակելի)

# ՔՐՈՆԻԿ

—).(—

Պագուի մէջ ասկից 15 տարի առաջ՝ հազիւ 600ի չափ հայեր կային, հիմա անոնց թիւը 40 հազարի յանկած է։ Իրենց տնտեսական վիճակը երեք դասակարգ կը կազմէ. միլիոնատէր, վաճառական ու արհեստաւոր, և բանւորական դասակարգ։

—Դոնէն Պատրիարքարան ուղղուած ծանուցագրի մը համեմատ՝ ասկից ետքը Հայաստան ղրկուելիք տեղապահներն ալ՝ առաջնորդներու պէս «Պէրաթ» պիտի ստանան։ Մինչեւ հիմա սեղապահները, Դատական և Կրօնական Նախարարութեան պաշտօնագիր յանձնարարականովը աղատ էին իրենց պաշտօնատեղին մեկնելու։

—Վանայ կուսակալ Թահիր փաշան, ամսոյս 13 թուականով հեռագիր մը ղրկած է պալատ, որով կը ծանուցանէ թէ՝ «այդ պիսի» անկարգութիւններ և մարդու կորուստ չէ պատահած ընաւ։ Կուսակալը որ պալատին մէկ հարցումին պատասխանած է այս հեռագրով, կուելցնէ թէ իր պատասխանին ուշանալուն պատճառը հեռագիրներուն խըզուած ըլլալն էր...

—Վանայ անգլիական հիւպատոս անուանուեր է Պ. Ֆրէնճիս։

—Պալքէսերի վերջին հրդեհին մէջ այրած են 222 տուներ որոնցմէ 200ը յոյներու և հայերու կը վերաբերէր։ Ասոնց մէջ կան հայոց և յունաց վարժարանները և յունական եկեղեցին։

—«Բազմավէպ»էն կը տեղեկանանք թէ Բարիզի արեւելեան կենդանի լեզուաց դպրոցին հայերէն դասերուն կը հետեւին 13 ֆրանսացի աշակերտներ։ Ասոնցմէ Պ. Պ. Առմէ և Կունօ վկայական արժանացած են։ Հայերէնի ուսուցիչն է հանրածանօթ Պ. Բարիէռ, որ, որքան խղճամիտ, այնքան ալ խստապահանջ դասախօսի համբաւ ունի։

—Տօքթ. Իւթիւճեան գործնական միջոց մը գտած է ազգ. հիւանդանոցին յիմարանոցի ճիւղի կառուցման ծախքը հայթայթելու։ Կատաղարկէ որ, Պոլսոյ 10,000է աւելի բարեկեցիկ հայ ընտանիքները, որոնք նոր տարւոյ առթիւ 100 ոսկիէ մինչեւ մէկ մէճիտ կը ծախսեն պտտղի, անուշապուրի և վոխադարձ նուէրներու, այդ գումարները յատկացնեն վերոյիշեալ անհրաժեշտ դարձած շինութեան։

—Գերմանական նպաստով հաստատուած որբանոց-վարժարաններու ընկերութեան անօրէն Պ. Լոհմանու Պոլիս գացած և մեր պատրիարքին այցելած է։ Քիչ օրէն Հայաստան պիտի անցնի քննելու համար այդ որբանոցներուն վիճակը։

—Կ. Պոլսէն «Մէմորիալ Տիպլոմաթիք» լրագրին կը հաղորդեն թէ Սուլթան Ապտիւլ-Համիտի առողջութիւնը շատ անգոհացուցիչ է։ Զը նայելով իր մարմնական տանջանքներուն, Սուլթանը երբեմն արտակարգ ջանքեր կընէ օտար պետութիւններու այս կամ ներկայացուցիչը ընդունելու համար։

—«Տէյլի Թէլէկրաֆ» կը գրէ. Հայաստանի մէջ, մասնաւորապէս Վան և Բաղէշ մեծ մտատանջութիւն կը տիրէ։ Վանի մէջ վերջերս խռովութիւն մը տեղի ունեցաւ, որու միջոցին քիւրդ մը և վեց հայեր սպաննուեցան։ Եթէ կուզուի խաղաղութիւնը պահպանել, քանի մը քիւրդ պետերու տեղափոխութիւնը անհրաժեշտ է։

—Վերջերս Եւրոպական դեսպան մը զանգատեր է Թուրքիոյ արտաքին գործերու նախարարին՝ թէ ինչո՞ւ չեն պատժուեր Հայաստանի քրիստոնեայ բնակիչները հարստահարող քրդերը։ — Նոյն իսկ Մեծն Աղեքսանդր չէ կրցած յաղթել քիւրտերուն, պատասխանած է թէվֆիք փաշան, ուզելով հասկըցընել թէ Թուրք իշխանութիւնները անզօր են կարգի բերելու այդ հրոսակ ազգը։ Քանի մը օր ետքն է որ կը պատահէր գերմանացի գիտնական՝ Պէլքի դէմ եղած յարձակումը որուն հեղինակները վայրկենապէս ձերբակալուեցան....

—«Բիւզանդիոն»ի մէջ կը կարդանք թէ Թիֆլիսի Ներսէսեան վարժարանի ուսուցչական մարմնի անդամները ինչպէս նաեւ վերատեսուչը ամենապաղ ընդունելութիւն ըրեր են Դուրեան և Աշոտ Նորընծայ եպիսկոպոսներուն, ասոնց յիշեալ վարժարանը այցելած միջոցին։

—Տ. Հմայեակ եպիսկոպոսը որ Կրօն. Ժողովոյ որոշումով Բուրդպէլէն պիտի երթար այնտեղի կրօնափոխական շարժումները կասեցնելու, ետ կեցած է այդ մտադրութենէն, ճանապարհի և այլ ծախսերու չգոյութեան պատճառով։

—Պոլսոյ մէջ զրոյց մը կը շրջի թէ Սուլթանը մօտերս ընդհանրապետ պիտի հրաւիրուի Սուլթանի հրամանագրի մը համեմատ՝ ասկից ետքը Հայաստան ղրկուելիք տեղապահներն ալ՝ առաջնորդներու պէս «Պէրաթ» պիտի ստանան։ Մինչեւ հիմա սեղապահները, Դատական և Կրօնական Նախարարութեան պաշտօնագիր յանձնարարականովը ազատ էին իրենց պաշտօնատեղին մեկնելու։

—Վանայ կուսակալ Թահիր փաշան, ամսոյս 13 թուականով հեռագիր մը ղրկած է պալատ, որով կը ծանուցանէ թէ՝ «այդ պիսի» անկարգութիւններ և մարդու կորուստ չէ պատահած ընաւ։ Կուսակալը որ պալատին մէկ հարցումին պատասխանած է այս հեռագրով, կուելցնէ թէ իր պատասխանին ուշանալուն պատճառը հեռագիրներուն խըզուած ըլլալն էր...

—Վանայ անգլիական հիւպատոս անուանուեր է Պ. Ֆրէնճիս։

—Պալքէսերի վերջին հրդեհին մէջ այրած են 222 տուներ որոնցմէ 200ը յոյներու և հայերու կը վերաբերէր։ Ասոնց մէջ կան հայոց և յունաց վարժարանները և յունական եկեղեցին։

—«Բազմավէպ»էն կը տեղեկանանք թէ Բարիզի արեւելեան կենդանի լեզուաց դպրոցին հայերէն դասերուն կը հետեւին 13 ֆրանսացի աշակերտներ։ Ասոնցմէ Պ. Պ. Առմէ և Կունօ վկայականի արժանացած են։ Հայերէնի ուսուցիչն է հանրածանօթ Պ. Բարիէռ, որ, որքան խղճամիտ, այնքան ալ խստապահանջ դասախօսի համբաւ ունի։

—Տօքթ. Իւթիւճեան գործնական միջոց մը գտած է ազգ. հիւանդանոցին յիմարանոցի ճիւղի կառուցման ծախքը հայթայթելու։ Կատաղարկէ որ, Պոլսոյ 10,000է աւելի բարեկեցիկ հայ ընտանիքները, որոնք նոր տարւոյ առթիւ 100 ոսկիէ մինչեւ մէկ մէճիտ կը ծախսեն պտտղի, անուշապուրի և վոխադարձ նուէրներու, այդ գումարները յատկացնեն վերոյիշեալ անհրաժեշտ դարձած շինութեան։

—Գերմանական նպաստով հաստատուած որբանոց-վարժարաններու ընկերութեան անօրէն Պ. Լոհմանու Պոլիս գացած և մեր պատրիարքին այցելած է։ Քիչ օրէն Հայաստան պիտի անցնի քննելու համար այդ որբանոցներուն վիճակը։

—Կ. Պոլսէն «Մէմորիալ Տիպլոմաթիք» լրագրին կը հաղորդեն թէ Սուլթան Ապտիւլ-Համիտի առողջութիւնը շատ անգոհացուցիչ է։ Զը նայելով իր մարմնական տանջանքներուն, Սուլթանը երբեմն արտակարգ ջանքեր կընէ

---

—Հա՛, կիյնամ կոր, Աննիկ հանըմ։

Ու երախան ինկաւ Աննիկ հանըմի գիրկին մէջ։ Արիւնը տաք տաք կը կաթկթէր. փոքրիկ կեանք մը, իր արշալուսի բոպէներուն, չուշանի պէս ծռեցաւ իր ցողունին վրայ. աչուկները մեղմով կը մարէին, թարթիչները վար կիջնէին, գէմքը կը կունատէր մահուան գեղնութիւնով, եւ անդամները կը սառէին։ Երախան զարնուած էր կուշտէն։

—Աննիկ հանըմ.

—Ի՞նչ է, աղուորիկս։

—Մայրիկս, մայր... իկիս... ըսէ... որ... ու ալ չկար երախան, իր շրթունքներուն վրայ մարած էր «մայրիկս» բառը, կցկտուր յոգւոյութեամբ։

Գ.

Մայրը բան մը չէր տեսած. ան կրսպասէր։ Կրսպասէր անհամբեր սիրունիկ թոչնիկին։ Բոլոր տունը զարթուեցաւ. ալ ոչ ոք մնաց փռուած դիակներէ զատ, եւ Աննիկ հանըմի գրկէն խլուեցաւ երախային մարմինը, սոսկալի զոհ մարդկային անհաւատալի գազանութեան. ձգուեցաւ սանդուղին գլուխը, այնտեղը փռուած իր անո՛ւշ ու անխռով քունին մէջ, քսանըչորս ժամուան կրած տագնապներէ ետքը. ո՛չ բարձի պէտք ունեցաւ, ո՛չ անկողնի, ո՛չ վերմակի. չոր տախտակները կը բաւէին իր խոնջ ու լքուած անդամներուն՝ որոնք ալ հիմա տեղէ մը վախ չունէին, ո՛չ կապարէն, ո՛չ ժանտարմի ժանգոտ երեսէն եւ ո՛չ արիւնոտ սուրերէն։

Մայրը կը նայէր այն կողմը. վայրկեանէ վայրկեան կը յուսար տեսնել իր փոքրիկի սիրուն գլխիկը. կրսպասէր անուշիկ ձայնի մը, որ վարէն «մայրիկ» պիտի պոռար։ Եւ զուր սպասեց սրտի անհատնում սպասումով։

—Լուր մը. Աշոտս։

Ու սենեակին պատերը լրիկ փրսփսացին. «Աշոտս»։

—Ամենքը ելան, ո՞ւր մնաց Աշոտ։

Ու արձագանգը կը շնչէր. «ո՞ւր մնաց»։

—Քիչ մը առաջ աչքովս տեսայ Աշոտս։

Ու քիչ մը առաջ իրաւցընէ տեսած էր Աշոտը։

—Աշո՛տս, Գաբրիէ՛լ աղա, Աշոտս։

Եւ խեղճ մայրը ինքզինքը կորսընցուց, ալ բան չտեսաւ, ամէն ինչ մթնցաւ աչքին. կծկուած, կորսուած իր թեւերուն մէջ։

Կէս ժամ ետքը սթափեցաւ սայլի մը ճռինչէն։ Վար նայեցաւ. մեռելները կը տանէին. հա՛, նորէն մեռելներ իրարու վրայ նետուած, վրէժխնդիր նետուածք մը հէք մարմիններու։ Ամենէն վերը դրուած էր փոքրիկ փսխաթէ ծրար մը։ Աչքերն անգիտակցօրէն կեղրոնացան անոր վրայ. լա՛ւ մը նայեցաւ վերէն վար. պտտիկ տոտիկներ կերկննային ծրարէն դուրս, եւ գլխիկ մը, վիզէն կախուած գառնուկի գլխիկի մը պէս, որ կը տատանէր երերուն՝ սայլի անիւներուն իւրաքանչիւր դարձուածքին։ Ճանչցաւ. իր սիրունիկն էր։

—Ա՜խ, Աշոտս, Աշոտս, Աշոտս...

Եւ տխուր արձագանգը, մեռելական փողոցներուն մէջ երկնուեցաւ.

—«Ա՜խ, Աշոտս, Աշոտս, Աշոտս»։

Ու հիմա, երբ այս տողերը կը սահին կիյնան գրչիս ու սրտիս ծայրէն արիւնի կաթիլներով, աչքիս առջեւ կը պատկերանայ այդ հէք մայրը արձանի պէս յառած պատուհանէն դուրս, արցունքը թարթիչներուն վրայ քարացած. փոքրիկ նահատակիս գլխիկը իր փսխաթէ ծրարէն դուրս երերուն, մահակիր սայլը շարժման մէջ, եւ սրտակուծ ձայն մը՝ որ, սրտիս մէջ ոլորուելով, գալարուելով կարձագանգէ.

«Ա՜խ, Աշոտս, Աշոտս.....»

...

——).(——

նուր ներում պիտի չնորհէ հայ քաղաքական յանցաւորներուն։

Շատ աղէկ կընէ եթէ սա բարենորոգումները ժամ առաջ ի գործ դնելու հանէ ինչ որ աւելի օգտակար և նպատակայարմար է քան այնքան բարեսիրտ գտնուիլը... յանցաւորներու հանդէպ։

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԷՊՔԵՐ

### ԿՐԷՏԷԷՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս որ դիւրին էր գուշակել, Զարը քաղաքավարական ձեւերու տակ՝ աննպաստ պատասխան մը տուեր է Սուլթանի վերջին աղաչական հեռագրին։ Այդ հեռագիրը չէ կրցած Եորկիոսի Կրէտէի Քոմիսէր անուանումը ետառնել տալ։ Եւ արդէն տարեգրութեանց մէջ չանսնուած ճիւաղային բանը պիտի ըլլար ատիկա։

«Թան» կըսէ. «Հրդեհը վերարծարծելու միակ միջոցն է սեղի տալը Սուլթանի առջեւ. արդէն խոշոր սխալ մը պիտի ըլլայ նոյն իսկ դրօշակի խնդրի մէջ անոր գոհացում տալը»։ Եւ սակայն Թուրքան փաշային Լիվատիէն վերադառնալէն ի վեր, փոքրիկ զիջողութիւն մը կընդունարուի ռուս կառավարութեան քով։ Արդեօք Զարը չլացա՞ւ այդ փաշային խօսքերէն, որուն համար շատ վարպետորդի է կըսուի։ Բէթիմօի մէջ Թուրք դրօշակը բզկտող ռուս զինուորներուն պետը, ծովա՛յ Սքրիտլոֆ հակառակեր է Թրքական դրօշակին ջնջուելուն, առարկելով թէ իր կառավարութենէ հրահանգ չէ ստացած։ Վերջին լուրերուն նայելով, օսմանեան դրօշակը պիտի շարունակէ մնալ միմիայն Սուտաի ծովախորշին վրայ ոեւէ ամրացած կէտի վրայ, եւրոպական դրօշակներու քով։

Եորկիոս իշխանը տասնեւհինգ օր չանցած Կրէտէ պիտի հասնի։ Արդէն ռուս ծովակալը մերժեր է իր պաշտօնակիցներուն վերջին որոշումներուն մասնակցիլ, նկատելով թէ այդ խնդիրները այլ եւս Քոմիսէրին իրաւասութեան կը պատկանին։ Կրսուի թէ Նումա Տրոզ՝ իշխանին պիտի ընկերանայ իբրեւ խորհրդական։

Միջազգային դատարանին առջեւ քանտիայի ընտանիքի մը սպանիչներուն դատը տեսնուած ատեն, յայտնուեր է թէ Չարդերու նախընթաց օրը, Էթհէմ փաշան բոլոր իսլամ ազդեցիկ անձերը մէկտեղ գումարելով, հրաւիրեր է զիրենք որ 24 ժամուան մէջ ամէն քրիստոնեաները բնաջինջ ընեն։ Այս ոճրագործներու գումարման ներկայ գտնուեր է նաեւ անգլիացի հապարապետ Զըրչիլ, որ այս վայրագ մտադրութեան դէմ խստիւ բողոքած ըլլալուն արտաքսուեր է ժողովքէն։

### ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Մաթէն» լրագիրը քանի մը տեղեկութիւններ կը հրատարակէ տեսակցութեան մը վրայ զոր Զարը ունեցած է անգլիացի պետական անձի մը հետ։ Խնդիրը ղէնընկէցութեան վրայ է։ Զարը կը փափաքի որ ժողովը գործնական ու կարուկ արդիւնք մը տայ և չէ թէ խաղաղութեան տարտամ յոյս մը։ Վեհապետը կը հաւատայ որ պետութիւնները կրնան միաբանիլ արգիլելու համար սպառազինութեանց աւելնալը, և բաւականանալ միայն հիմակուանները կատարելագործելով։

—Թուրք կառավարութիւնը որոշած է Իզմիրի մօտ գտնուած Մարմարիցա նաւահանգիստը զինուորական նաւահանգստի վերածել։ Նաւարան, զինարան պիտի հաստատուի այնտեղ։ Մարմարիցայ գլխաւոր կայանը պիտի ըլլայ Թուրքիոյ Միջերկրականի թղթէ նաւատորմին։

—Վիլհէլմ կայսրը իր մայրաքաղաքը հասաւ։ Ոեւէ յոյց կամ լուսավառութիւն չէ եղած իր հասած օրը. նոյն իսկ այդ մաքով կազմուած մասնախմբի մը ձեռնարկը վրիպեր է։ Վակոն մը լեցուն ընծայ բերած է հետը, գոհարներ, պատկերներ, թանկագին առարկաներ և... Յարութիւն պատրիարքին կորբուրարը։

—Հապեշիստանը գարձեալ պատերազմի պատրաստութիւններ կը տեսնէ։ Կառավարութեան կողմէ Եւրոպայ ղրկուած է Տ. Սարգիս Թէրզեանց՝ ռազմամբերքի մեծ պատուէր տալու համար։ Այս հայը մեծ ծառայութիւններ մատուցած է կառավարութեան և Մենելիք զինքը աչքին լուսին պէս սիրելով, պատուանշաններ և մեծ հարստութիւն մը նուիրած է անոր։

—Հաշտութեան յանձաժողովին սպանիացի պատուիրակները, իրենց կառավարութեան հրահանգին համաձայն, Ամերիկայի պահանջումները ընդունած են։ Ֆիլիպպեան արշիպեղաքոսը՝ և Սուլօնի կղզիները պիտի մնան Ամերիկայի, որ 20 միլիոն տոլարի փոխարինութիւն մը պիտի ընէ Սպանիոյ։

—Հականիշխանական համաժողովին որոշումներէն մէկը պիտի ըլլայ թոյլատրել որ զանազան երկիրներու ոստիկանութիւնները, անիշխանական սպաննութիւններու պարագային արտօնութիւն ունենան ուղղակի յարաբերութեան մտնելու իրարու հետ՝ առանց արտաքին գործոց նախարարի միջամտութեան։ Ընտիր որոշում։

—Օտէսայէն «Սդանտարտ»ի կը գրեն թէ Ռուսիա պատրաստուելիներ կը տեսնէ Ծայրագոյն Արեւելքի մէջ, ուր 12,000 նոր զինուորներ պիտի ղրկէ։ Իսկ Ֆիլատէլֆիա ապսպրած մարտանաւերը դարձեալ Բօրթ-Արթիւր պիտի ղրկուին և այդ քաղաքը գտնուող ռուս զինուորներու թիւը 30,000ի պիտի բարձրացուի։

—Լուքէնի իր բանտը փոխադրուած է. և կամ լաւ եւս ողջ ողջ թաղուած է դերեզմանին մէջ։ Շաբաթը մէկ անգամ Պլանշառ աբբային դէմքը պիտի տեսնայ. և տարին մէկ անգամ իրաւունք պիտի ունենայ քանի մը վայրկեան իր ազգականներուն այցը ընդունելու։

—Ուիթհալ անուն հարուստ անգլիացի մը, Իզմիրի մէջ, թատրոնէն տուն դարձած ատեն, աւազակներու ձեռքով լեռը սարուեր և տասը օր ետքը կրցեր է իր օձիքը ազատել 1,500 ոսկի փրկանք վճարելով։

—Տիկին Տրէյֆիւս հեռաձեալ հեռագիրը ստացած է լը ղլիսուցաւ ամուսինէն. «ամենուն հետ կուրախանամ, բարոյական ու ֆիզիքական վիճակս լաւ է»։

—Պաթէմպէրկի Լուի իշխանը մարտանաւ մը քննելու միջոցին, դիպուածով ռումբերու մթերանոցը ինկեր և ծանրապէս վիրաւորուեր է։

### ՆՈՐ ԶՈՀ ՄԸ

Արդարեւ Տրէյֆիւսի անձն սկսած է քիչ քիչ իր նախկին կարեւորութիւնը կորսնցնել, գնդապետ Բիքառի առջեւ որ այս պահուս առաջին տեղը կը գրաւէ։

Սպայակոյտը կը փափագի անպատճառ անուանարկել, դատապարտել այս ուղղամիտ և հաստատակամ սպան, որ, ամենէն առաջ յանդգնած էր հուժկու ձեռքով մը վեր առնել այն քողը որուն տակ ծածկուած էր ղժոխային մեքենայութիւններու շարք մը։ Եւ սակայն, հիմա Ֆրանսայի հանրային կարծիքը այնքան տլամադիր չերեւար, թողլու որ սպայակոյտը ուզածին պէս կտրէ նետէ։ Ուստի թէեւ Բարիզի զինուորական կառավարիչ Զիւրլէնտէնի պնդումներուն վրայ որոշուեցաւ Բիքառը պատերազմական ատենի մը դռնփակ նիստերուն խստութեանց ենթարկել, և սակայն հանրային կարծիքը սաստիկ կը բողոքէ։ Օռօռ, Ռաբէլ, Ռատիքալ և Սիէքլ լրագրերը հանրագրութիւններ բացած են որոնք՝ Բիքառի ազատումը խնդրող հազարաւոր ստորագրութիւններով կը ծածկուին։ Եթէ սպայակոյտը անուղղայ մնայ, նոյն իսկ մտադրութիւն կայ նոր օրէնք մը քուէարկել, որուն ուժով Պատ. Ատենի որոշումները վերջնական զոյն չպիտի ունենան. այլ վերջին խօսքը միշտ վճռաբեկ ատենին պիտի մնայ։

——).(——


ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏՊԱՐԱՆ

Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆ

ՎԱՌՆԱ.

Սրկրորդ բաղ, Շիրչէճոֆա փողոց Սագալը Զէօմէի կից.

կը տպագրուին հայերէն, պուլկարերէն, գաղղիերէն, յունարէն, տաճկերէն, և այլ լեզուներով այբեստոմս, հաստէտոմս, հասանելիան հրաւիրագիր, ազգարարութիւն, դամակագլուխ, պահարան, մահազդ, վաճառականական ամէն տեսակ գործեր; գիրք, լրագիր, և այլն։

Գունաւոր եւ ոսկեզօծ զարդագործերու համար ամէն լեզուէ նոր տառեր եւ մասնաւոր գործիքներ կը գտնուին։

ՄԵԾ ԽՆԱՄՔ ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ ԳԻՆԵՐԸ ՑՈՅԺ ԴԻՒՐԱՄԱՏՉԵԼԻ

Ուրիշ քաղաքներէ եկած ամէն յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին։



ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐԺՈՒՄ»ի

Կը տպագրուին ամէն լեզուէ այբեստոմս, հաստէտոմս, նամակագլուխ, հարսանեկան հրաւիրագիր, մահազդ, ինչպէս նաև պրոշիւռներ։

Գիներն յոյժ դիւրամատչելի։ Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին։



ՎԱՐԴՕ

ԵՐԿՈՒ ՍԷՐ

(ՀԱՅ ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ)

)( Գին 1 Ֆրանգ )(

Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառնայի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպէ՝ Տ. Անտոն կոչի մօտ, Ռուսչուք՝ Հայկ Մալախեանի սրճարանը, Սոֆիա՝ Տ. Մուշեղ Արծրունիի քով։

Մօտերս մամուլին կը յանձնուի նոյն հեղինակին «Բռնութեան զոհերը»։



«ՇԱՐԺՈՒՄ»

Վառնայի մէջ կը վաճառուի Մուսալլա, Թահմիզ Կէօզիպէօյիւ-քեանի խանութը, եւ Ապտիւրրահման մզկիթին դէմը հայկական դրատունը, Ա. Զարպհանէլեանի քով։



ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ս. ՍԱՊԱԶ-ԳԻՒԼԵԱՆ

ԵՒՐՈՊԱՅԻ ԺԱՂԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆՔ ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԻՑ ՑԵՏՈՅ

Գին 1 ՖՐԱՆՔ

Կը վաճառուի Շարժումի խմբագրատունը։



Отговорникъ: А. СУКЯСОВЪ.

Печатница „Взаимность“ Варна.